ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34-Ա

<< 24 >> հոկտեմբերի 2018 թվական գյուղ Փանիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 24-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը։

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 46-Ն արոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին։
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար՝ Վարդան Մակեյան)

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին։
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավար՝ Վարդան Մակեյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՄԵՆ ԱՐԵՎԻԿՅԱՆ՝ կողմ ------------------------------------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԿՈՍՅԱՆ՝ կողմ------------------------------------

ՄԱՆՎԵԼ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ--------------------------------------------

ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ------------------------------------------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ---------------------------------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

«24» հոկտեմբերի 2018 թվական

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Փանիկի համայնք, գյուղ Փանիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 35-Ն

<< 24 >> հոկտեմբերի 2018 թվական — գյուղ Փանիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 4-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 46-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մաս.

1) Հաշվի առնելով այն փաստը, որ <<Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ հաճախող երեխաների թիվը նվազել է, և 90 երեխայի փոխարեն հաճախում են 84 երեխա, Փանիկ համայնքի բյուջեի եկամտային մասի <<Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի>> <<1620,0>> թիվը փոխարինել <<1554,0>> թվով:
2) Համայնքի բյուջեի եկամուտների <<Ընդամենը եկամուտներ>> տողի <<74954,5>> թիվը փոխարինել <<74888,5>> թվով:

Ծախսային մաս.

1) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) ծրագրի և տնտեսագիտական դասակարգման (պահուստային միջոցներ) 4891 հոդվածի <<8003,0>> թիվը փոխարինել <<6803,0>> թվով:
2) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5 դաս 1 (Ճանապարհային տրանսպորտ) ծրագրի և տնտեսագիտական դասակարգման 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<1800,0>> թիվը փոխարինել <<1434,0>> թվով:
3) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 4, դաս 1 (Փողոցների լուսավորում) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի <<700,0>> թիվը փոխարինել <<1000,0>> թվով:
4) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 08, խումբ 4, դաս 2 (Այլ մշակութային միջոցառումներ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի <<400,0>> թիվը փոխարինել <<700,0>> թվով և 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածի <<1000,0>> թիվը փոխարինել <<1400,0>> թվով:
5) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 7, դաս 1 (Սոցիալական

6) Ընդամենը <<Ընթացիկ ծախսեր>> տողի <<74954,5>> թիվը փոխարինել <<74888,5>> թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՄԵՆ ԱՐԵՎԻԿՅԱՆ՝ կողմ-----------------------------------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԿՈՍՅԱՆ՝ կողմ-----------------------------------

ՄԱՆՎԵԼ ՄԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ-----------------------------------

ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ-----------------------------------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ-----------------------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

«24» հոկտեմբերի 2018 թվական
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 36 -Ա

«24» հոկտեմբերի 2018 թվական գյուղ Փանիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովում ընդգրկել ավագանու երկու անդամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովում ընդգրկվող ավագանու անդամներ հաստատել՝
   1) Ամբակում Սերոբյան
   2) Մանվել Սալնազարյան:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերի մասին» թիվ 37-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՄԵՆ ԱՐԵՎԻԿՅԱՆ՝ կողմ ---------------------------------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԿՈՍՅԱՆ՝ կողմ---------------------------------

ՄԱՆՎԵԼ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ---------------------------------

ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ---------------------------------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

«24» հոկտեմբերի 2018 թվական
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Փանիկի համայնք, գյուղ Փանիկ